1840

Ltn
886

ԿԱՐԱՌՈՏ

ԱՂՕԹՔՆԵՐ

Շաբաթի ամէն մէկ օրին համար

Թարգմանութիւն

Եւրոպա տպագրոթիւն

Ի ՄՈՍԿՈՎ.
Ի Տպագրատան Ալէքսանդրի Տէրոյ Լուսաւորչոյ.
1840.

1080
918
Ջ. 28289-62

43801-4-2.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ темъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ, Москва 1840 года, Сентября 29 дня.

Ценсоръ В. Флеровъ.

(886-60)

28 388

ԼԷՕՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԱՐՃԱՌՈՏ ԱՂՕԹՔՆԵՐ

Շաբաթէ առաջ Դէն օրէն համար։

Թէպէտ էս աղօթքներս, որ էս գրքիս մէջն գրված են, էնպէս են կարգված՝ որ խնդրողն ոչ թէ մէնակ, բայց ընկերութեան մէջ աղօթէ. բայց նորանք էն անձին էլ որ մէնակ է՝ օգտակար կըլինին. միայն թէ քիչ փոփոխութիւն անէ. ինչպէս որ է՝ դընելով դէնք բառի տեղակ. և ինչ դնելով դէջ բառի տեղակ։

Կիրակի առաւօտեան համար։

Ո՛վ Տէր, որ դու երկինքըն և երկիրըս ստեղծելուցն ետու, եօթներորդ օրումն քո ամէն գործքերիցն հանգիստ առիր և էլ մեզ, քո ստեղծվածներիս պատուիրանք տուիր, որ մեր ժամանակի եօթներորդ մասըն մանաւանդ ջոկենք և սուրբ պահենք, քեզ յատուկ պաշտոն կատարելոյ համար. խոնարհութենով աղաչումենք քեզ՝ օգնիր մեզ, որ քո էս սուրբ պատուիրան-

քիս հնազանդվինք և էս օրըս քո փառաց հա-
մար սուրբ պահենք։ Խոհանումենք քեզանից՝
որ քո մարդասիրութեան պէս հրամայեցիր մեզ,
որ քեզ սիրենք և ճանաչենք. պատճառն որ՝
գիտումենք որ մինակ քո շնորհումն է կեանքն.
և օրհնումենք քեզ, որ դու կանչեցիր մեզ որ
էսօր մեր աշխարհական գործքերիցն հանգիստ
առնենք. և էլ աւելի աղօթքին պարապվինք
թէ առանձին տեղ, և թէ մեր ընտանեաց հետ,
և թէ եկեղեցւոյ մէջն՝ և էլ աւելի քո սուրբ
խօսքըն կարդանք և լսենք, և մտածենք և իրար
հետ հոգևոր խօսակցութիւն անենք։

Ով Տէր, ցանկանումենք որ էս օրըս և էս
շաբաթըս քեզ հետ սկսենք։ Թող քո երեսիդ
լոյսն մեր հոգիներումն ծագի. և հենց հիմիկ
որ մեր աղաչանքներըս մատուցանումենք քեզ,
մեր Ճշմարիտ միջնորդ և Տէր Յիսուսի Քրիս-
տոսի անունովն. մխիթարիր մեր սրտերըս էն
հաստատ յուսովն. որ դու մօտիկ ես էն ամէնին
որ դէպի քեզ կանչումեն՝ հենց էն ամէնին որ
հաւատքով են կանչում դէպի քեզ։

Ճշմարիտ է որ մեր մարմնաւոր աչքերովն կարող
չենք քեզ տեսնել, բայց զօրացրու մեզ, որ հա-
ւատանք թէ աղօթքներս որ մատուցանումենք

քեզ՝ լսելի կըլլինին քեզ և որ պատասխան կըն-
դունենք քեզանից։

Իրաւի է, ով ամենակարող Հայր, որ մենք
արժանի չենք քեզ որդիք կոչվելոյ. պատճառն
որ՝ անթիւ ժամանակ մեղանչեցինք քեզ դէմ։
Բայց փառք լինի քո անուանիդ որ դու քո սի-
րելի որդին Յիսուս Քրիստոսըն տուել ես, որ
մեղաւորների համար մեռնի. ինչու որ՝ գիտու-
մենք և խոստովանվումենք, թէ առանց նորան
պէտք էր մեզ յաւիտեան մեռնիլ և կորչիլ։
Ճշմարիտ է՝ որ քո բարկութիւնն արդարու-
թեանով կարող էր մին րոպէի մէջ ջնջել մեզ
և դժոխքի մէջ քցել մեզ. բայց դու ողորմա-
ցիր մեզ, և քո խօսքովն ցոյց տուիր մեզ, թէ
ինչպէս պիտի փրկվինք և ապրինք։ Տէր օգնիր
մեզ, որ մտքի և սրտի արժանի հոգացողութե-
նով, էն անձներին նման որ իրանց անմահ հո-
գոյ ազնուութիւնըն իմանումեն՝ էս օր հարց-
նենք. թէ ի՞նչ պէտք է անել մեզ որ ապ-
րինք։

Գոհանումենք քեզանից, ով Տէր՝ էն պարա-
պոտ թեան համար որ էս օր շնորհեցիր մեզ, էն
օրհնութիւն տրուող ուսմունքներըն լսելոյ հա-
մար, որ նորանց գիտութիւնն մեր հոգոյ փրկ-
կութեան համար ամենից օգտակար և հարկա-

ւոր է։ Օ՛հ շնորհք տուր մեզ՝ որ սրտի մտօք միտք դնենք քո խօսքին. զօրացու՛ մեզ, որ իմանանք նորան. և ջերմեռանդ ա՛լ մեզ որ նորանով դէպի բարին առաջանանք. որ էն քարոզներն որ կը լսենք՝ մեզ դէմ վեր չբկենան դատաստանի օրումն և չբդատապարտեն մեզ։ Ո՛վ մարդասէր Աստուած, օրհնի՛ր քո աւետարանի պաշտօնեաներին, և մանաւանդ նորանց, որ մեզ տուիր՝ որ էլ փրկութեան ճանապարհն ցոյց են տալիս մեզ։ Հենց դու ինքդ սովորցու՛ նորանց, որ բաւական լինին մեզ սովորցնելոյ համար։ Ո՛վ Տէր՝ թո՛ղ քո խօսքդ էս օր մեր խղճմտանքն զարթնացնէ՝ որ էլ աւելի մեղաց չարութիւնն իմանանք, և էն վտանգն որ նորա պատժապարտութենից է, տեսնենք, և աւելի ջանք անող լինինք Քրիստոսի հետ մասնակցո՛ ստանալոյ՝ որ նա մէնակ փրկումէ ամէն մեղքից։ Նրանի՛ թէ մեր հարևաններն և բարեկամներն և ճանաչներն էլ զարթնանան իրանց անմահ հոգոյն համար հոգս անելոյ։ Նա երանի՛ թէ քո շնորհքդ զօրաւոր լինի մեզ և նորանց վերայ, որ փրկվինք էն բարկութենից որ գալու է. որ մենք էլ խոստովանվումենք թէ արժանի էլանք նորան։

Ո՛վ Տէր, աղաչումենք քեզ, որ մեզ էսօր ամէն աշխարհական խորհուրդներից և խօսքե-

րիցն աղաւ պահես. և քո հոգիդ էնպէսի բա-
ներ բերէ մեր միտքս, որ էս սուրբ ժամանա-
կիս վայել են։ Օհ երանի թէ քո հանգիստ
առնելոյ օրըն պատշաճ կերպով պահենք. և
նորան սիրենք ինչպէս ամէն եօթն օրիցն աւելի
պատուական և օգտակար օր. պատճառն որ
շնորհաց ժամանակ է քեզ ծառայելոյ համար
սահմանված։

Երբ որ քո տան մէջ ժողովված կըլինինք,
պահիր մեզ յիմար և անպիտան մտածմունքնե-
րից. զօրացրու մեր յիշողութիւնըս՝ որ ինչ
բան որ կըլսենք՝ պահենք և տուր որ էս օրս
յաւուրկ շահաւոր ժամանակ լինի մեր հոգոյ
համար, որ էլ նորա համար օրհնենք քեզ
յաւիտեանս յաւիտենից։ Մենք անխելք ենք
դու սովորցրու մեզ. մեղաւոր ենք՝ թողութիւն
շնորհիր մեզ. չար ենք՝ յետ դարձրու մեզ
Յիսուսի Քրիստոսի համար, որ նորան քեզ
հետ ով Հայր և Հոգի Սբ ամէն պատիւ,
փառք և գոհութիւն ենք տալիս հիմիկ և
յաւիտեանս. ամէն։

Մեր Հայր որ երկնքումն ես. Քո անունդ սուրբ
լինի։ Քո արքայութիւնդ գայ։ Քո կամքդ լինի
ինչպէս երկնքումն, էնպէս էլ երկրիս վերայ։
Մեր ամէն օրվան հացըն էս օր տուր մեզ

Եւ մեր պարտքերն թող մեզ՝ ինչպէս որ մենք էլ թողումենք մեր պարտականներին։ Եւ մեզ փորձանքի մէջ մի՛ քցեր՝ բայց մեզ չարիցն ազատիր։ Ինչու որ քո է թագաւորութիւնն՝ և զօրութիւնն և փառքն՝ յաւիտեանս ամէն։

Կերոնէ եբէնէն հոմար։

Ով Հայր որ ամէնին վերայ ողորմած եւ գոհանումենք քեզանից էն ամէն շնորհքին և պարգևներին համար, որ էսօր ստացանք քեզանից։ Օրհնումենք քեզ կերակուրների և շորերի, և էս կեանքիս ամէն ուրիշ պարգևներին համար. և խոստովանվումենք քո առաջիդ թէ ամէն կողմանէ էս պարգևներիցս իսկի մէնին արժանի չենք։ Բայց էլ աւելի երկրպագութիւն ենք անում քեզ քո սիրոյն համար, որ քո սիրելի որդոյ աւետարանովն ճանաչացրիր մեզ. քո շընորհաց խօսքին համար՝ որ տուիր մեզ, և էն փառաց յուսոյն համար՝ որ յայտնեցիր մեզ։

Օ՜հ թէ քանի՜ զարմանալի բան է, որ մեզ ողորմելի մեղաւորներիս համար մեղաց թողու-

թիւն է քարոզվում մեր Տէր Յիսուսի Քրիստոսի արիւնովն, որ էլ կանչվումենք նորա հետ մասնակից լինելոյ։ Ո՛վ Տէր, ասվեցաւ մեզ, թէ մեղաւոր ենք քո առաջիդ. սրա աղաչումենք քեզ տուր մեզ որ իմանանք մեր մեղքըն. որ մեր մեղաց յիշատակն ծանր լինի մեզ, և նորանց բեռն անտանելի։ Լսեցինք էն մարդասէր փրկչի համար՝ թէ նա մեռաւ, որ մեր մեղքերըն վերառնէ։ Օ՜հ երանի թէ, հաւատանք նորան և մեր սրտերումն ընդունենք նորան ինչպէս փառաց յոյսըն։ Լու որովհետև գիտումենք որ առանց քո շնորհքին կարող չենք շիտակ իմանալ էն որ լսեցինք և ոչ գործածել և կատարել. ապա ով Տէր՝ ուղարկիր քո սուրբ հոգին մեզ մօտ, ինչպէս որ խոստացել ես քո ողորմութենովդ. որ նորա զօրութենովն քո ճշմարտութիւնն պինտ հաստատվի մեր խղճմտանքումն, և մեզ բերէ դէպի յաւիտենական կեանքն։

Տէր՝ տուր մեզ էս սուրբ օրիս վերջումն, որ ճշմարտապէս մեր պատուական հոգոյ անպատմելի ազնուութիւնըն և գերազանցութիւնըն իմանանք։ Շնորհիր մեզ, որ ճշմարտութենով իմանանք. թէ էն մարդն՝ որ ամէն աշխարհքըն էլ ստանայ, և իրան անձին վնաս տայ. իսկի մին բան չի շահվում, բայց ողորմելի է։

Ահա հիմիկ մին պատուական կիրակի էլ անցաւ և չենք գիտում, եթէ մին ուրիշն էլ տեսնելու լինինք։ Մինչև որ մէկէլ կիրակին հասնէ՝ կարելի է որ դէպի յաւիտենական աշխարհքն կանչվինք։ Վայ մեզ. քանի՞ շատ շաբաթներ կորցրինք։ Ու հիմիկվանըս էլ քանի՞ քիչ անցկացրինք էնպէս՝ ինչպէս որ պէտք էր մեզ անցկացնել նորան։

Քանի՞ ցուրտ և առանց ջերմեռանդութեան էլան մեր աղօթքներն քո շնորհքդ ստանալոյ համար. մեր սրտերս քանի՞ անհոգ և պինդ էլան քո խօսքըն ընդունելոյ համար։ Ու թէ և ասվեցաւ մեզ՝ թէ Քրիստոս մեռաւ մեզ փրկելոյ համար. բայց՝ քանի՞ քիչ շարժվեցանք մենք էս քաղցր և ահաւոր վարդապետութենովս։ Ո՛վ ողորմած Աստուած, տուր մեզ թողութիւն, և օգնիր մեզ որ էս գիշերս մեր աչքերըն քնով խրիթելուցն առաջ, թողութեան և փրկութեան համար փախչինք Քրիստոսի մոտ, որ եթէ հիմիկ վեր ընկնինք և էլ վեր չի կենանք, Յիսուսուն ննջենք և մեռնենք և ապա նորանով յաւիտեան փառաւորվինք։

Աղաչումենք քեզ, ո՛չ Տէր՝ եթէ աբվվի մեզ ուրիշ օրի լոյսն տեսնել շնորհիր մեզ, որ էն բաների յիշատակն որ լսեցինք՝ զօրաւոր

լինի մեր մոքներումն էս բոլոր շարաթումս՝ որ հիմիկ մտինք։ Երբ որ մեղքն փորձէ մեզ. թող յիշենք թէ մեղքն էն մեր սիրելի Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսին խաչեց։ Ո՛վ զօրացրու մեզ մեր մոքումն էն խորհուրդն հաստատել՝ որ քո շնորհքներիդ վերայ յոյս դնելով իսկի մին էլ չըմեղանչենք։ Թող յետ քաշվինք էն մարդկանցիցն և տեղերիցն՝ որ անցկացած ժամանակումն մոլորացրին մեզ և մեղաց մէջ քաշեցին։ Թող քեզ բարկացնելուցն աւելի վախենանք, քան թէ մեր կեանք կորցնելուցն, և աւելի խնդրենք քեզ հաճոյ լինիլ, քան թէ էս կեանքըս ապրեցնել։ Երանի՜ թէ իսկի մին ժամանակ չի ամաչենք խոստովանվիլ, թէ մեր խորհուրդն մէնակ էն է որ քեզ համար ապրինք և քեզ ծառայենք։ Թող մեղքիցն մէնակ ամաչենք և ոչ թէ մին ուրիշ բանի համար։ Թող իսկի չի ամաչենք խոստովանվիլ էն մեր հաւատքըն որ խաչված Քրիստոսին հաւատումենք. բայց տուր մեզ որ առանց վախի նորա ետևէն գանք և նորա զօրութենովն մեղքի, աշխարհքի և սատանայի դէմ կռիւ անենք. և նորա հաւատարիմ զինուորներ և ծառաներ մնանք մինչև մեր կեանքի վերջն։

Ո՛վ Աստուած, քո բնութիւնդ և էութիւնդ հենց էն է, որ ամէն ժամանակ ողորմութիւն

անես և թողութիւն տաս. ընդունիր մեր խոնարհ աղաչանքներըս, և թէ և մեր մեղքի կապանքներովն կապված լինինք, բայց քո մեծ ողորմութեան գթութիւնդ թող արձակէ մեզ, մեր միջնորդ և բարեխօս Յիսուսի Քրիստոսի փառքին համար. ամէն. Մեր Հայր որ։

Ընդ-հանուր աղաւօթքն համար։

Ո՛վ ամէնակարող և յաւիտենական Աստուած, երկնաւոր Հայր, խոստովանումնք քո առաջիդ որ մենք և ամէն մարդիք մեղաց մէջ յղացվանք և ծնվանք, և մարմնոյ ծնվածն՝ մարմին է. և նորանք որ մարմնոյ պէս են վարվում, կարող չեն Աստուծոյ հաճոյ լինել, բայց մեղքի մէջ են մնում. և գործքով էլ շատ մեղք և յանցանք են անում։ Գիտումնք որ մեր փրկիչն էլ ասաց՝ թէ ոչ ով կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել, եթէ ոչ նորոգվի և ջրից և սուրբ հոգուց նոր ծնվի։ Ապա ողորմութենով մտիկ արա մեզ՝ լուա՛ց մեզ՝ և սուրբ արա՛ մեզ քո սուրբ հոգովն. որ մենք քո արդար բարկութենիցն ազատված՝ Քրիստոսի եկեղեցոյ տապանի մէջ ընդունվինք. և հաւատքումն հաստատված, և յուսով ուրախացած, և սիրով արմատ

քցած՝ անց կենանք էս ողորմելի աշխարհքիս ալիքներովն, որ վերջն գանք հասնենք յաւիտենական կեանքի բնակարաններն, և էն տեղ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն թագաւորենք քեզ հետ յաւիտեանս յաւիտենից։

Ո՛վ մարդասէր Աստուած, հիմիկ նոր մանուռնենք մեր երկրաւոր կեանքի օրինաւոր և հարկաւոր գործքերին մէջ, որ քո խնամքդ կանչեց և հաստատեց մեզ նորանցում. բայց վախով և դողալով էսօր աշխարհքի զբաղմունքներին և գործքերին մէջ ենք քաշվում. որ չբլինի թէ էն փորձութիւններովն որ շատ անգամ մեզ վերայ են գալիս՝ անարգենք քեզ մեղքով, և յետոյ մեր հոգիներըս վիրաւորենք, մինչև որ գիշերումն մեղաւոր և պատժապարտ խղճմտանք մեզ հետ տուն բերենք։

Ո՛վ Տէր, տուր մեզ որ ոչ թէ մէնակ հիմիկ, բայց էս բոլոր ցերեկս միշտ մեր սրտերումս վախենանք քեզ բարկացնելուցն։ Թող մեր գործքերն սուրբ և քաղցր լինին քո հոգոյ կառավարութենովն և քո շնորհաց քաղցրութենովն։ Թող յիշենք թէ էն մեր երեսի քրտունքով հաց ուտելն՝ քո սուրբ օրէնքի անէծքիցն և մեր մեղք գործելուցն է դուրս գալիս։

ԳՐԱԴԱՐԱՆ

Թող էս մտածմունքս խոնարհացնէ մեզ, և մեր աշխատանքների մէջն համբերող անէ մեզ։ Թող ճշմարտութեանով շնորհակալ լինինք, նրա համար որ մինչև հիմիկ պահվեցանք դժոխքիցն. և քո շնորհքովն յոյս ունինք որ Քրիստոսի հաւատքովն երկնքի արքայութեանն հասնենք։

Տէր՝ դու մեր սրտի ծածուկ խորհուրդներըն գիտուս։ Օ՛հ. տուր մեզ սրտի մաօք ցանկանալ որ մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնորհքովն և գիտութեանովն մեծանանք։ Թող քո սուրբ հոգին, դեռ քանի որ մեր գործքերումն ենք, սովորցնէ մեզ, և մեր միտքս բերէ էն որ երեկ լսեցինք։ Նրանի թէ ամէն պղծութենից պահվինք և ամէն փորձութենից ազատվինք. որ էլ մեր բերանիցն իսկի մին մեղաւոր բան չի դուրս գայ։ Օհ. թող յիշենք թէ Տէրի ծառաներ ենք։ Նրանի թէ մեր ամէն կենցաղավարութիւնն նորա խօսքի ճշմարտութեանովն կառավարվի։ Թող մեղքիցն յետ քաշվինք և փախչենք նորանից ինչպէս օձի երեսից. որ իսկի մին բան չշարժէ մեզ, մին բան ասելոյ կամ անելոյ, որ մեր խղճմտանքին հակառակ է. բայց էլ աւելի ամէն բանի համբերենք, քան թէ մեր օրհնված փրկիչը վիրաւորենք, և նորա սուրբ հոգին տրամացնենք։ Պահիր մեր ոտները քո ճանապարհների մէջ. որ մեր գնալն չը՝ծռվի։

Ո՛վ Տէր՝ օգնիր մեզ որ էս օրրս էնպէս անցկացնենք՝ ինչպէս թէ նա էր մեր յեսին օրն որ երկրի վերայ ունինք անցկացնել. ինչու՞ չենք գիտում եթէ նոր օր տեսնելու լինինք։ Աստուած իրան շատ ողորմութեան պէս փրկէ մեզ Յիսուսի Քրիստոսի համար, որ նորա պատուական անունովն և խօսքերովն մեր ամէն կարօտութիւնքն մին տեղ առաջի ենք գնում ասելով՝ Մե՛ր Հայր՝ որ։

Աղէ՛ս-շաբէթ երեկան համար։

Ո՛վ ողորմած Տէր՝ չենք հոմարձակվում քո երեսի առաջն գալ, մեր անձին արդարութեան վերայ յուսալով. բայց քո շատ և մեծ ողորմութեան վերայ մեր յոյսն դնելով։ Արժանի չենք, որ մեր մեղաւոր աչքերքն բարձրացնենք դէպի քո փառաց աթոռն։ Բայց դու հենց էն Տէրն ես, որ միշտ յօժար է ողորմութիւն անել իրան ստեղծվածներին վերայ։ Սրա համար տուր մեզ հիմիկ քո շընորհքդ՝ որ քո առաջիդ երևինք ինչպէս ստեղծվածներ իրանց ստեղծողի երեսի առաջին. ինչպէս պառաժապարտներ իրանց դատաւորի երեսի առաջին, ինչպէս մեղա-

ւորներ իրանց մարդասէր փրկչի երեսի առաջին. և էլ ինչպէս որդիքներ իրանց քաղցր և ողորմած հօր առաջին։ Ո՛վ Տէր՝ քեզ փյելումմ ողորմիլն, բայց մեզ ամօթ և երեսի նախատինք։ Ս՛ենք ո՛վ Տէր՝ մեղանչեցինք էսօր, և արժանի ենք մեռնելոյ. բայց ունինք միջնորդ և բարեխօս քեզ մօտ ո՛վ հայր՝ Յիսուս Քրիստոսին էն արդարին և անարատին. որ նորա արիւնն սրբումմ ամէն մեղքից։

Ո՛վ Տէր՝ սովորցրու մեզ աղօթք անելին։ Ո՛վ թափիր մեզ վերայ շնորհաց և աղօթք անելոյ հոգին։ Թող սուրբ հոգին օգնական լինի մեր տկարութեանն, որովհետև մենք չենք գիտում աղօթք անել՝ ինչպէս որ արժան է. բայց պէտք է նա մեզ համար անասելի հառաչանքներով բարեխօս լինի։ Ո՛վ տուր մեզ էս ժամանակումս որ ջերմեռանդ փափակով քո շնորհքին և քո պատկերի նմանութեանն ցանկանանք. և իսկի չըդադարենք, մինչև որ քո ներող ողորմութիւնքն և սրբող շնորհքն յատուկ փորձառութեանով իմանանք և մեզ ստանանք։ Գիտու մենք, որ եթէ սրտերումս անիրաւութիւն պահենք, Տէրն չի լսիլ մեզ. նրա համար պարզամիտ արա մեզ մեր աղօթքներումս. մեր խորհուրդներումս և մեր աշխատանքներումս, որ ամէն մեղքերքն սպանենք, և մեր

անձներդս ամէն ամբարշտութենից և աշխարհական ցանկութիւններից սրբենք։

Ա՛ենք բարձրացնում մենք մեր աչքերդն էս գիշերումս դէպի քե՛զ, ո՛վ ամենակարող Տէր՝ որ տեսնումես՝ թէ մեր անձներումս զօրութիւն չունինք. օգնի՛ր մեր անձներիս. և աղաչումենք քե՛զ՝ պահի՛ր մեզ թէ մեր դրսի մարմինների կողմանէ, և թէ մեր ներսի հոգիների կողմանէ. որ պահպանված լինինք էն ամէն փորձանքներիցն և վտանգներիցն որ մարմնոյն կարող են պատահել. և էն ամէն չար խորհուրդներիցն որ հոգոյ վերայ կարող են հասնել և նորան վնաս տալ։ Դու գիտուումես որ մենք էնքան շատ և մեծ վտանգների մէջ կացած ենք, մինչև որ մեր բնութեան տկարութեան պատճառովն, չենք կարենում միշտ հանգիստ լինել և հաստատ կանգնիլ. սրա համար շնորհի՛ր մեզ էն զօրութիւնը և պահպանութիւնը որ մեզ ամէն վտանգների մէջ պահպանէ, և մեզ ամէն փորձանքների միջովն անցկացնէ։ Ո՛վ աստուած, որ ողորմութեանդ ցոյց ես տալիս քե՛զ, որ մեր հայր ես երկնքումն. և ամէն ստեղծվածներին վերայ տէրութիւն ես անում՝ քո անունդ սուրբ և փառաւորված լինի յաւիտեան, քո ամէն բարութեան քաղցրութեան համար, որ մեզ վերայ է. թող քո արդարութեան՝ խաղա-

28289-62
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР

ղութեան՝ և սուրբ հոգով ուրախութեան թա-
գաւորութիւնդ մեր սրտերումն հաստատելի, և
էլ քո փառաց թագաւորութիւնդ դոյ. արժանի
արա մեզ նորան վայելելոյ, և մեր նեղութիւն-
ները վերջացրու։ Բայց չէ թէ մեր կամքս,
այլ քո կամքդ լինի ինչ որ էն հաստատէ երկ-
րիս վերայ մեր բաներումն, թէ յաջողութեան
և թէ փորձութեան կողմանէ, թող քո կամքդ
կառավարէ մեզ, ինչպէս որ նա երկնքումն քո
սրբ հրեշտակները կառավարումէ, որ յօժարու-
թենով հնազանդվումեն նորան։ Այլ թէ
էնքան տուր մեզ՝ որքան որ հարկաւոր է մեզ
ամէն օր մեր ժամանակաւոր ապրեցողութեան
համար, այսինքն մեր ամէն օրվան հացը, և
նորանով բաւական կըլլինինք. բայց տուր մեզ
որ ոչ թէ մէնակ էն հացի համար աշխատենք,
որ կորչումէ, բայց էլ աւելի էն հացի համար,
որ միշտ կըմնայ մինչև յաւիտենական կեանքի մէջ։
Թող ամէն բանից աւելի մեր հոգոյ համար հոգս
անենք, և թող մեզ ողորմելի մեղաւորներիս մեր
ամէն պարտքերը և մեղքերը, Յ՝ Քրիստոսի
համար, որ նա նորանց քաւելոյ համար մեռաւ։
Տարի՛ Տէր՝ թող մեզ մեր պարտքը և մեղ-
քը, ինչպէս որ մենք էլ թողումենք նորանց
որ մեզ դէմ մեղանչեցին, խարհրդով՝ խօսքով՝
կամ գործքով. և երբ որ մեր անցկացած մեղ-
քերն թողված լինին, ապա պահպանիր մեզ որ

և նոր մեղք չգործենք։ Եւ քո կամքովդ մի՝ սանիր մեզ փորձութեան վանդնելի մէջ, որ չըլլնի թէ նորանով վէր ընկնինք։ Սրա համար աղաչումենք քեզ, մի՝ թողեր մեզ, որ չըմատնվինք մեր թշնամոյ չարութեանն և կամ մեր անձնելի յիմարութեանն. բայց փրկէր մեզ չարիցն՝ էն չար սատանայիցն, և ամէն չար բաներիցն, որ նորանց գլխաւորն մեղքն է։ Այս են էն ողորմութիւններն որ մենք կարօտ ենք նորանց. և թէև իսկի արժան չենք, բայց Քրիստոսի անունովն աղաչումենք քեզ, որ նորանց տաս մեզ։ Դու կարող ես օգնել մեզ. ինչու որ՝ քո է թագաւորութիւնն և զօրութիւնն։ Դու էլ քո ազատ շնորհքովդ շատ անգամ փրկեցիր աղքատ և զղջացած մեղաւորներին, և նորա համար մարդիքն երկրումն և հրեշտակներն երկնքումն խոստովանվումն՝ թէ քո է փառքն և գոհութիւնն։ Եւ մենք էլ քո ողորմութենովն՝ որ մեզ վերայ է, պարտական կըլլինք որ միաբանվինք էս արդար խոստովանութեանս հետ որ յաւիտեանս յաւիտենից պիտի մատուցանվի քեզ երկնքումն և երկրումս. ամէն։ Տ՝ե՛ր հայր որ։

Ներշնչեալ աղաւօտուն համար։

Ամենակարող և ողորմած հայր մենք մոլորեցանք և քո ճանապարհէն դուրս եկինք ինչպէս կորած ոչխարներ։ Մենք թողինք քեզ՝ բարի հովիւդ՝ մոլորված մանն եկինք մեղքի և խեղճութեան անապատումն. որ նորանում ամէն ժամ կորուստի մատ ենք։ Մենք մեր որսի խորհուրդների և ցանկութիւններին հետևէն գնացինք որ նորանք միշտ չար են. պատճառն որ՝ էն պիղծ և աղտանված աղբիւրն որ մեր սրտի մէջումն է՝ մէնակ աղի պիղծ ջուր է դուրս բղխում։ Մենք քո սուրբ օրէնքին դէմ մեղանչեցինք։ Քո օրէնքն սուրբ՝ և բարի է. և սրա համար մեր սրտերումն տրտմումենք. ո՛վ Տէր, երբ որ մաքներս ենք բերում թէ ինչպէս քանդեցինք նորանց խորհրդով՝ կամ գործքով։ Պատճառն որ՝ թողինք էն՝ որ պէտք էր մեզ անել, և էն արինք որ պէտք չէր մեզ անել. և էս ամէնս պէտք է մեր կեանքի ամէն օրին և ամէն ժամին համար աաենք. քանի որ սկսեցինք միտք անել և գործել։ Մեր հոգիներս հիւանդութեանով լցված և կորուստի մատ են։ Բայց դու ո՛վ Տէր ողորմիր մեզ ողորմելի մեղաւորներիս։ Տո՛ր մեզ որ մեղից կորուստն և խեղճութիւնը լմանանք. պատճառն որ՝ եթէ

մեր անձներ։ում չիմանանք էն խեղճութիւնը որ մեղքերն մեզ վերայ են ածում հենց էս աշխարհքում, և էլ էն կորուստը որ նորա մէջ կքցեն մեզ նոր գալու աշխարհքումն. ապա սրտի մտոք չենք ցանկանալ քո ողորմութեանդ։ Ո՛վ Տէր պահիր և ապրեցրու մեզ թէ և յաւիտեան մեռնելոյ արժանի լինինք։ Պատճառն որ՝ մեր մեղքերը խոստովանումենք և դու խոստացար ողորմիլ և թողութիւն տալ նորանց որ աստուածային զղջութենով խոստովանումեն իրանց մեղքերը։ Օ՛հ. թող չը՛տաս որ մեր մեղքերի մեծութիւնն և յանցաւորութիւնն մեզ վէր քցէ էն յաւիտենական կրակին մէջ, որ սատանային և նորա հրեշտակներին համար պատրաստված է։ Բայց ո՛վ Տէր, ճշմարիտ ապաշխարութեան շնորհքն տուր մեզ, որ մեր սրտի մեղքերին համար, և մեր կեանքի մեղքերին համար սուգ անենք և լաց լինելով փախչենք Քրիստոսի խաչին մօտ, որ մէնակ հանգիստ առնելոյ տեղ է մեղաւոր հոգոյ համար։

Դու քո ողորմութենովդ մին էլ էս գիշերս պահպանեցիր մեզ։ Եթէ դու ո՛վ բարի Աստուած մեր կեանքն չէիր պահպանել, ապա մենք իսկի չէինք զարթնացել նոր օր տեսնելոյ. բայց մահի մէջ կընկնէինք։ Օգնիր մեզ որ էս առաւօտս սրտի մտոք մեր անձներ։ս

քննենք և հարցնենք, եթէ սուրբ խօսքիցն հաստատ յոյս ունինք, որ եթէ անցկացած գիշերումս մեռած լինելինք երանելի կերպով մեռնելու լինելինք։ Այ՝ օրքան ահաւոր բան կը լինէր եթէ մեր աչքերրս դժոխքի մէջ բանայինք, և մեր ջորս կողմանցն ոչ ով չը տեսանելինք, բայց մէնակ դևերրն և կորած հոգիներրն. զուր տեղն մին կաթ ջուր խնդրելինք մեր կրակով վառված լեզուներրն հովացնելոյ համար, և էն որդնի կծելումն չարչարվելինք՝ որ իսկի մին ժամանակ չի մեռնիլ, և էն կրակի սաստկութենումն ընչվելինք, որ իսկի մին ժամանակ չի անցնիլ՝ և իսկի առանց մէն յուսոյ լինելինք որ մին ժամանակ էն վախով լցված խաւարի և պատուհասի տեղիցն ազատվինք։ Իրաւի որ մենք հիմիկ էս վիճակումն կըլինելինք, թէ որ քո ողորմութիւնդ մեծ չըլինէր։ Ով Տէր, մեզ աւելի ջերմեռանդ արա քանի թէ մին ժամանակ էլանք, որ մեր հոգիներրս փրկվին։ Օգնիր մեզ որ էս առաւօտս բոլոր սրտով աղօթք անենք։ Օ՜հ թէ քանի մեծ ողորմութիւն կըլինի, թէ որ մենք աղքատ և մեղաւոր սոեղծվածներս քո հոգոյ սովորցնելումն դէպի Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն քաշվինք, և վերջապէս նորա անունումն փրկված և արդարացած լինինք քո առաջիդ, և երկնքի արքայութիւնըն ժառանգենք։

Ո՛վ երկնաւոր հայր, դու խաղաղութենով հասցրիր մեզ մինչև էս օրիս սկիզբն։ Ուրեմն աղաչումենք քեզ, պահիր մեզ սորանում, քո ամենակարող զօրութենովդ, և շնորհիր մեզ որ էսօր մեղքի մէջ չընկնինք, և մին վտանգի մէջ չըլլալենք, բայց որ մեր ամէն գործքերն քո կառավարութենովդ կարգվին, որ մենք միշտ էն անենք որ ընդունելի է քո առաջիդ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

Ո՛վ Տէր՝ թէ որ դու կամենաս մեզ ընդունել. ահա էստեղ պատրաստ ենք որ մեր անձներըս քեզ յանձնենք և քո ծառայութեան տանք։ Իմացանք որ մեզաց ճանապարհներն՝ հենց հիմիկ խեղճութեան ճանապարհներ են, և էլ գիտումենք, որ յաւիտենական կորուստի մէջ են տանում։ Օ՛հ առաջնորդիր մեզ դէպի քո ճանապարհներն, որ ուրախութեան և խաղաղութեան ճանապարհներ են։ Իրաւի որ գիտումենք, թէ էն դուռն որ դէպի յաւիտենական կեանքն է տանում, նեղ է. և թէ էն ճանապարհն որ պէտք է մեզ նորանում գնալ, թէ որ կամենանք փրկվիլ, էլ նեղ է. և թէ քիչ ընկերներ կըգտնենք որ մեզ հետ կըգնան։ Պատճառն որ տեսնումենք, ով Տէր՝ որ մարդկանց ազգի մեծ մասն մեղքի, և անհոգութեան լայն ճանապարհովն են գնում, որ դէպի մարմնոյ և հոգոյ կորուստն է տանում դժոխքումն։

Տէր ողորմիր նորանց, և զօրացրու մեզ որ ճշմարիտ և շիտակ ճանապարհով գնանք. որ էսպէս վերջումն ժառանգութիւն ստանանք քո արքայութեանումն, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն, որ մեր տկարութեան օգնութիւն անելով սովորցրուց մեզ էսպէս աղօթք անել. Ա՛մէն հայր որ։

Նշխարաբեր էջերվան համար։

Ով Տէր, քո պահպանութեանովդ և ողորմութեանովդ մին էլ պատշաճ և պարապ ժամանակ տրվվաւ մեզ, որ քո երեսի առաջին մին տեղ ժողովվինք, և մեր ծընկներըս քո շնորհաց աթոռի առաջին խոնարհացընենք։ Օ՜հ քանի՛ մեծ շնորհք է մեզ՝ ով թագաւորների թագաւոր, որ տրվված է մեզ, քեզ հետ խօսիլ։ Էս աշխարհքումն մին երևելի աստիճան և պատի՛ չունինք, բայց որովհետև քեզ մօտենալոյ և քո երեսի առաջն գալոյ շնորհք ունինք, էլ մեր մեծաւորներին հետ չի՛ նախանձվինք նորանց դրսի և երևելի փառաւորութեան համար. ինչու որ՝ մէնակ մին կարճ ժամանակ կըմնայ։

Մարդասէր Աստուած, թէ որ մեր սրտերս պարզամիտ են քո առաջիդ, և թէ որ մեր սրտերումս քեզ ծառայելոյ համար յատուկ ցանկութիւն ունինք. ապա դու շնորհիր քո երեսիդ քաղցրութիւնը, որ էս մեր խոնարհ տրններին մէջ էնպէս ծագի և երևի, ինչպէս որ հաբուստների պալատների մէջն։ Կոտրված և խոնարհված սիրտն է, որ դու խոստացար բնակվիլ նորանում։

Ո՛վ Տէր էնպէսի միտք շնորհիր մեզ. և էն ժամանակն թէ և աղքատ լինինք էս աշխարհքումս, իրաւի հարուստ կէլինինք քեզ բարեկամ և բաժին ունելով մեզ յաւիտեան։ Եթէ դու ես մեր հովիւն, և մենք քո ոչխարներն, որ քո ձայնիդ լսումեն և քո ետևէդ գալիս են, ապա մենք իսկի մին բանի չենք կարօտիլ։ Պատճառն որ՝ դու կերակուր, և շոր ես տալիս մեզ. թէ և մենք մեր մեղքերովս անարժան էլանք հացի էն ամէն մէկ պատառին, որ մեր բերանի մէջ ենք դնում. և ջրի էն ամէն մէկ թասին, որ մեր ծարաւութիւնը հովացնում։ Ո՛վ Տէր, քո շնորհքդդ տուր մեզ, որ քեզ ճանաչենք և սիրենք, և ծառայենք քեզ, և ապա ուրախ կըլինինք՝ ինչ որ մին անգամ քո կամքդ, մեզ համար կըկարդէ, և երանելի կըլինինք յաւիտեան։ Եւ հիմիկ ով Տէր՝ էս գիշերս

մեր հոգիներըս և մարմիններըս քո ձեռքդ ենք յանձնում։

Մեր մարմիններն էս օրիս գործքերովն և աշխատանքներովն վաստակված են, և դու էս խաւարի ժամանակըն հաստատեցիր որ նորանք քնով հանգիստ առնեն և զօրանան։ Բայց չենք համարձակվում, որ մեր աչքերըն խրիենք, առանց քեզ մտիկ տալոյ և քեզ աղաչելոյ, որ մեզ համար հոգս անես։ Կարելի է որ մեր տրներն կրակով այրվին, և մենք կորչինք նորանց հետ, թէ որ քո կամքդ և խնամքդ վերակացու չըլինի մեզ վերայ։ Կարելի է որ մեռնենք առանց յատուկ ժամանակ գտնելոյ, որ աղաղակենք, Տէր ողորմիր մեզ։ Սրա համար՝ մեր անձներըս յանձնումենք քո ամենողորմ պահպանութեանդ։ Գիտումենք որ մենք մեղաւոր ենք, բայց դու խաչին վերայ մին պատարագ պատրաստեցիր որ մեղաւորներըն, և նորանցից գլխաւորներըն էլ փրկես։ Ով Տէր մեզ էլ փրկիր և շնորհիր, որ երբ որ աշխարհքիցս դէպի յաւիտենական աշխարհքն կանչվինք, էնպէս մեռնենք որ մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի պատուական արիւնովն խաղաղութիւն ունենանք քեզ հետ և հաւատքով ապրինք։

Օ՜հ սրբիր էս գիշերս մեր խղճմտանքներըս մեղքի պատժապարտութենից։ Նու տուր

մեզ, որ հաստատ և պինդ յուսով տեղուբարձի մէջ վէր ընկնինք, որ եթէ էս երկրումն մին էլ խակի չէ զարթնանանք, Աբրահամի գոկումն ընդունված լինինք։ Թող մեր վերջին մտածմունքներն և խորհուրդներն քեզ համար, և քո սիրոյ համար և մեր մեղաւոր հոգիներիս համար լինին. և երբ որ առաւօտն զարթնանանք, տուր մեզ որ զարթնալոյ առաջին ժամումն մեր միտքն և սիրտն քեզ մեր Աստուծոյդ մտիկ տայի։

Ո՛վ Տէր, աղաչումենք քեզ՝ լուսաւորիր մեր հոգևոր խաւարին. և քո մեծ ողորմութենովդ պահպանիր մեզ էս գիշերիս ամէն վնասից և վտանգից, քո միածին որդոյ, մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար։ Ամէն։ Հայր՝ ամէն օրն իրան հետ փորձութիւններ և նեղութիւններ է բերում, որ նորանք ամէնքն մեղքերից են դուրս գալիս։ Նեղութիւն ամէն մարդոյ բաժինն է. պատճառն որ ամէնքն մեղանչեցին։ Բայց փառք լինի քո անունիդ. որ դու կոտրված սրտի հառաչելն և հոգոյ հանելն չես անարգում. և ոչ էլ նորանց փափակն՝ որ իրանց մեղքերին համար տրտմած են։ Քո ողորմութենովդ զօրաւոր արա մեր աղօթքներս՝ որ քո առաջիդ ենք անում մեր ամէն նեղութիւններումն, որ չարչարումն

մեզ. և քո շնորհքովդ լսիր մեզ, որ էն չարիքն որ սատանայի կամ մարդոյ հնարքն և խորամանկութիւնն մեզ հակառակ գործումէ, ջնջըվին, և քո բարութեան կամքովն ցրվին, որ մենք քո ծառաներս հալածանքով խակի չնուազվինք. բայց էլ աւելի մեր սրտշներովս և մեր կեանքներովս միշտ գոհութիւն տանք քեզ, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն Ամէն. Մե՛ր հայր որ։

Աղերսանքն տրուսուրան հոմար։

Ամենակարող Աստուած, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հայր, ամեն բանի ստեղծող, և ամէն մարդկանց դատաւոր. օգնիր մեզ որ սուգ անելով խոստովանինք մեր շատ կերպ մեղքերըն, որ մենք ժամանակից ժամանակ գործեցինք խորհրդով, խօսքով կամ գործքով քո աստուածային փառաւորութեան դէմ, և իրաւունքով քո տրամութիւնըն և բարկութիւնըն մեզ վերայ ածեցինք։

Երանի թէ ճշմարտութենով ապաշխարենք, և սրտի մտօք տրամենք մեր էս չարագործութիւններիս համար։ Թող նորանց յիշատակու-

թիւնն ծանր լինի մեզ, և նորանց բեռն անտանելի։ Ողորմիր մեզ՝ ողորմիր մեզ ով ողորմած հայր, քո որդոյ, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի համար. թողիր մեզ էն ամէնքն որ անց է կացել, և շնորհիր մեզ որ այսուհետև միշտ քեզ ծառայենք և հաճոյ լինինք կեանքի նորոգութենով, որ փառք և պատիւ լինի քո անունդ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռոնին։ Ո՛վ Տէր՝ դու պատուիրեցիր նորանց, որ վաստակված և բեռնաւոր են մեզքով և հոգոյ տրտմութենով և ցաւով, որ քեզ մօտ գան. և էլ խոստացար, որ հանգիստ տաս նորանց։ Ապա շնորհիր, որ մեր հոգիներս էս առաւօտումն փորձ առնեն և ճաշակեն քո շնորհքի զօրաւոր մխիթարութիւնը։

Ա՛յ յիշեր մեր մեղքերը՝ն, որ շատ և մեծ են, և վրէժ չէիխնդրես մեր մեղքերին համար, բայց խնայիր մեզ բարի Տէր, խնայիր մեզ. որ փրկեցիր մեզ քո պատուական արիւնոնին, և մեզ վերայ յաւիտեան մի բարկանար։

Ազատիր մեզ՝ ազատիր մեզ էս օր ամէն մեղքերից և չարութիւններից, որ չբլինի թէ վէր ընկնինք՝ և փրկիր մեզ մեր հոգևոր թշնամուցն, որ առիւծի պէս ման է գալիս՝ և պտրտումէ թէ ումի կուլ տայ. և էլ յաւիտենական մա-

հիցն, որ մեր անօրէնութիւններովն արժանի
էլանք նորան։ Ո՛վ Տէր՝ մեր փրկութեան Աստ-
ուած, աղաչումենք քեզ փրկէ՛ նեղութենովն
և արիւնով լցված քրտունքներովն, նորա խա-
չովն և չարչարանքներովն, նորա պատուական
մահովն և թաղվելովն, նորա փառաւոր յարու-
թենովն և համբառնալովն, և սուրբ հոգոյ գա-
լուստովն, որ ազատես մեր մեղաւոր հոգիները-
քո օրէնքի անէծքիցն, սատանայի որոգայթնե-
րիցն և թալակներիցն, էն մեղքիցն, որ ամէնից
հեշտ բռնումէ մեզ, և ապա վերջն յաւիտե-
նական դատապարտութենիցն։ Մեր միտքներս
թող էսօր աշխարհական զբաղմունքներով էն-
քան չըվէր առնըվին, որ քեզ մոռանանք։
Բայց դեռ քանի որ մեր գործքերումս ջանք
ենք անում, էլ աւելի ջերմեռանդ լինինք հո-
գով, որ քեզ Տէրիդ ծառայենք։ Երանի՝ թէ
մեր հոգիներիցն էսօր շատ անգամ աղօթքի և
գոհութեան խօսքեր վերանան քեզ մօտ։ Օ՜հ
երանի՝ թէ մեղքն, որ տեղ որ նորան գտնենք՝
ատելի լինի մեզ։ Թէ՝ որ քո սուրբ անունդ
հայհոյված լսենք կամ քո սուրբ օրէնքըն մեր
ընկերներիցն քանդված տեսնենք, թող մեր
հոգիներն նեղանան և զզվին նորանով. թող
նորանց չարութեան և յիմարութեան վերայ
սուգ անենք, որ էնպէսի անմտութենով Աստ-
ծոյն բարկացնումեն և համարձակվինք հեղու-

թեան հոգով խրատել նորանց՝ հարցնելով, թէ ինչպէս կարող են իրանց ստեղծողին էնպէս բարկացնել և իրանց հոգիները կորցնել։ Թող մեր խղճմտանքն լուսաւորվի և արթուն լինի։ Ինչ որ անենք թող Տէրին համար անենք և չէ թէ մարդկանց համար՝ ջանք անելով որ մեր անձները ընդունելի անենք նորան որ մեր սրտերը էք քննում։

Ո՛վ Տէր, քո շնորհքովդ օգնիր մեզ, որ մեր ընկերները մեր անձներին պէս սիրենք, և ամէն մարդկանց էնպէս անենք, ինչպէս կամենում ենք որ նորանք անեն մեզ։ Թող պատուենք և հնազանդվինք թագաւորին և էն ամէնին, որ իշխանութեան մէջ կարգված են նորա ձեռին տակն։

Թող մեր անձները խոնարհացնենք մեր ամէն կառավարիչների, սովորցնողների՝ հոգևոր հովիւների՝ և տէրերի ձեռին տակն. թող իսկի մին մարդոյ խօսքով կամ գործքով վնաս չըտանք։ Ճշմարիտ և արդար արա մեզ մեր ամէն գործքերումն և ճանապարհներումն։

Շնորհիր մեզ որ մեր սրտերումն իսկի մին չարութիւն կամ ատելութիւն չը՛պահենք։ Օգնիր մեզ որ մեր միտքըն և խորհուրդները

Քրիստոսի վերայ հաստատված պահենք, և մեր լեզուները չար խօսելուցն՝ սուտ ասելուցն և բամբասելուցն յետ քաշենք. և թող մեր մարմինները սուրբ հոգոյ տաճար լինին։

Շնորհիր մեզ, որ իսկի մին ժամանակ մեր ընկերի ապրանքներին չցանկանանք. բայց սովորինք մեր պարտաւոր գործքըն անել և կատարել կեանքի էն վիճակումն, որ Աստուած իրան կամքին պէս մեզ նորա մէջ կանչեց։ Այ՛ որովհետև գիտումենք որ մեր անձներիցս կարող չենք էս անել, և քո պատուիրանքներըն պահել, և քեզ ծառայել, եթէ քո մասնաւոր շնորհքըդ չըզօրացնէ մեզ. սրա համար ով Տէր՝ կանչումենք դէպի քեզ էն խօսքերովն, որ դուսովորցրիր մեզ՝ գործ ածել. և ասումենք. Ո՛ե՛ր հայր որ։

Զորեշաբթի երեկոն հոմար։

Ո՛վ ստեղծող և պահպանող Աստուած, դու մեր կեանքըն տուիր մեզ և պահպանեցիր նորան մինչև էս ժամանակս։

Դու ստեղծեցիր մեզ, և բանական հոգի տուիր մեզ. որ հաւատանք քեզ, վախենանք

քեզանից՝ և մեր ամէն զօրութենովն սիրենք քեզ։ Մենք ուղարկվեցանք էս աշխարհքս հենց նրա համար, որ պաշտենք քեզ, դոհութիւն տանք քեզ՝ և քո սուրբ անունդ փառաւորենք՝ և ճշմարտութենով մեր կեանքի ամէն օրերումն ծառայենք քեզ։

Բայց էս չէ արինք. պատճառն որ՝ ուրիշ բաներըն աւելի սիրեցինք քան թէ քեզ. ուրիշ բաներից աւելի վախեցանք քան թէ քեզ բարկացնելուցն, և հենց էս օրումս, ով ողորմած փրկիչ, մենք մոռացանք քեզ, մեր ամէն շնորհքների և պարգևների տուողն և մեր ամէն մխիթարութիւնների աղբիւրն։

Տէր ողորմիր մեզ ողորմելի մեղաւորներիս։ Տէր դոհանումենք քեզանից, որ քաւութեան և շնորհաց աթոռ կայ. որ մենք կանչվեցանք նորա մօտ դալ. որ անցկացած մեղքերին համար թողութիւն ստանանք, և շնորհք գտնենք նոր դալու ժամանակի համար։ Ով Տէր, թող էնպէս աղօթք չանենք, ինչպէս որ կեղծաւորներն են անում. որ միանակ իրանց պռոշներովն առաջ են բերում էն, որ իրանց սրտերումն իսկի չիմացան և չեն հաւատում. որ չըլինի թէ հենց մեր աղօթքներն յետին օրումն դատաստանի միջն մեզ դէմ վեր կենան, և դա-

տապարտեն մեզ։ Դեռ քանի որ ծուռները ենք դնում քո առաջիդ, թող բոլոր սրտով և ջերմեռանդութեամբ ցանկանանք քո շնորհքիդ, որ քաւես և մոռանաս էն, որ անց է կացել. և սրանից ետև մեզ գործելուցն մեզ պահես։ Մեր ամէն ծածուկ մտածմունքներն քո առաջիդ բաց և յայտնի են, ինչպէս որ մեր խօսքերն և գործքերն։ Օգնիր մեզ որ էս գիշերս սրտի մտօք մեր անձներըս քննենք։ Թող մեր մեղքերըն մեր մտքներս բերենք, և չբթողենք նորանց, որ մեր մտքիցն դուրս գան մինչև որ բարի յոյս ունենանք, թէ Քրիստոսի համար մոռացած և ջնջված էլան։ Թող քընի և հանգըստի մէջ չբմտնենք պատժապարտ խղճմտանքով կամ անհոգ սրտով. բայց մեր տեղուբարձներին մէջ վէր ընկնինք մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի մահուան և քաւութեան վերայ յոյս դնելով, և մեր կորած հոգոյ փրկութիւնըն նորանից խընդրելով։

Թող չբտաս մեզ, ով Տէր՝ որ կարծենք, թէ մենք աղօթքի մէջ միմեանք մեր ծուռներ չքելուվն էն ամէնըն անուամենք և կատարում, ինչ որ պէտք է մեզ անել։ Թող սովորենք ով Տէր, թէ աղօթքն մեր հոգիներըս քեզ մօտ բերելոյ և մեզ քեզ նման շինելոյ համար է կարգված, որ խընդրենք ընդունելոյ համար, և մանդանք գտնելոյ համար. և թէ մեր աղօթք-

ներն ուրիշ բանի համար օգուտ չեն, բայց մի-
նակ նրա համար, որ ողորմութիւն ստանանք, և
մեր անձնեերրս մահի համար և յաւիտենական
աշխարհքի համար պատրաստենք, և քո սիրովն
և քո ծառայութենովն առաջանանք և աւելի
ջերմեռանդ լինինք։ Սրա համար ով Տէր, տուր
մեզ աղօթք անելոյ հոգին, որ մեր սրտերրս քո
առաջիդ բանանք ինչպէս մեր երկնաւոր հօր
առաջին, Յիսուսի Քրիստոսի ձեռովն՝ որովհետև
սովորցրիր մեզ մին տեղ ժողովվիլ, և մեր
անարդ և անկատար կարողութեան պէս, օրէցօր
աղաչանք և գոհութիւն մատուցանել քեզ։

Այս ով Տէր շնորհիր՝ որ աւելի հոգևոր և
աւելի հաստատված լինինք քո աւետարանի
մէջ, որ աւելի ջերմեռանդութենով քո ճա-
նապարհներրն և օրէնքրն սիրենք, մեղքերրն
կատարեալ ատելութենով ատենք, որ էլ աւելի
յարմար և պատրաստ լինինք քո յաւիտենական
արքայութեան մէջ մտնելոյ համար։ Ով Տէր
տուր մեզ, որ սիրենք դէպի քեզ աղօթք ա-
նել, քո անունդդ գովել։ Բրեշտակներն երկն-
քումն սիրումեն գոհութիւններ մատուցանել
քեզ. և քո ծառաներն երկրումս սիրումեն քեզ
երկրպագութիւն տալ։ Արանի թէ մենք էլ
նորանց հետ համարվինք, և նորանց նման քեզ
ծառայելրն սիրենք։ Շնորհիր էս՝ Յիսուսի
Քրիստոսի համար ամէն։ Մե՛ր հայր որ։

Հենգշբբեն պատուական Համար։

Ո՛վ Տէր, քո սուրբ հոգոյ պաշտօնն էն է, որ նա մեղաւորներըն իրանց մեղքերին համար յանդիմանէ և քո խօսքի ձեռնին ցոյց տայ նորանց էն պատուական փրկիչըն, որ միանակ նորա ձեռնին կարող են փրկվիլ։

Աղաչումենք քեզ, որ մեզ էլ ճանաչացնես Քրիստոսի զօրութիւնըն և յօժարութիւնըն մեր հոգիներըս փրկելոյ համար։ Սովորցրու մեզ, թէ նա, որ խաչին վերայ մեռաւ, որ մեզ համար քաւութիւն անէ, Աստուած է և մարդ, և թէ սրա համար նորա արիւնն Աստուածային և անսահման զօրութիւն ունի մեզ ամէն մեղքերից սրբելոյ համար։ Օգնացրու մեզ, որ հաւատանք, թէ նա որ իրան անձն մեզ համար պատարագ տուաւ՝ բոլոր սրտով յօժար է՝ մեզ ընդունելոյ՝ քաւելոյ և օրհնելոյ համար. և օգնիր մեզ, որ էս հաւատքովս նորա մնացանք, որ մեր հոգոյ համար հանգիստ գտնենք։

Ո՛վ Տէր, մեր մեղքերն համարով աւելի են քան թէ մազերն, որ մեր գլխի վերայ կան. և նորանցից ամէն մէկն արժանի են քո բարկութեանն։

Օ՛հ թող նորանց ծանր բեռըն իմանանք, և իսկի թերևամտութենով հանգիստ չառնենք, մինչև որ նորանց վէր առնես մեզանից։

Թող մեր մեղաւոր հոգիներըս մեր օրհնված փրկչի խաչի տակն քցենք, աղաչելով քեզ՝ որ քո քաղցր սիրոնն և ողորմութենոնն մխիթարող յոյս տաս մեզ, որ դու յաժար ես թողութիւն շնորհել մեզ նորա պատուական արիւնի և մահի ձեռոնն։

Պատճառն որ՝ ով Տէր ի՞նչպէս կրկարենանք էսօր մեր կերպ կերպ զբաղմունքների և գործքերի մէջ գնալ, առանց հաստատ յոյս ունելոց թէ դու մեզ բարեկամ էլար Յիսուսի Քրիստոսի ձեռոնն։

Ինչու որ՝ եթէ Քրիստոսի հետ մասնակից չըլենինք, անիծված ենք, որ տեղ որ գնանք և ինչ բան որ անենք։ Վ՛այ. քանի՝ ահաւոր բան է, որ հենց էս մին օրումս քո անէծքի տակ մնանք։ Ո՛վ մարդասէր աստուած, հեռացրու էն մեզանից՝ էն հաւատքըն շնորհելով մեզ՝ որ մեղաւորների փրկիչ Յիսուսի Քրիստոսի հետ մեզ մասնակից է անում։

Ցանկանումենք յիշել, թէ Աստուծոյ ուխտն մեզ վերայ է, և թէ քո անունովդ կանչված

ենք: Սրա համար աղաչումենք, որ զօրացնես մեզ, որ մեր սուրբ կոչումի պէս արժանի կերպով վարվինք՝ և մանաւանդ որ խոպառ հրաժարվինք սատանայից՝ և նորա ամէն գործքերից, և էս չար աշխարհքի փառքից, և ունայնութիւններից. և մարմնոյ ամէն մեղաւոր ցանկութիւններից. և որ հաւատքով ընդունինք քրիստոնէական հաւատքի ամէն խօսքերը. և որ քո սուրբ կամքդ և պատուիրանքներդ պահենք, և նորանցում գնանք մեր կեանքի ամէն օրումն: Խոստովանումենք, թէ էս ամէնս մեր յատուկ պաշտօնն և պարտաւորութիւնն է. բայց վա՛յ մեզ. օրքան պատժապարտ էլանք՝ էս պարտաւորութիւնները մոռանալով:

Պատճառն որ՝ սատանային և նորա գործքերին, աշխարհքին և նորա փորձութիւններին, մարմնոյն և նորա ցանկութիւններին դէմ հակառակ կենալոյ և կռի՛ անելոյ տեղակ, շատ աւելի հնազանդ էլանք և հետևեցինք նորանց խաբէութեանն և մոլորութեանն:

Ո՛վ դու ամէն շնորհաց Աստուած՝ թող մեզ մեր մեղքերը և օգնի՛ր մեզ, որ ամէն օր քո մեծ փրկութեան գիտութիւնը խնդրենք, և էլ յիշենք, թէ քանի արդար կըլինի մեր դատապարտութիւնն. եթէ մեր փրկութեան հա-

մար անհոգ կենանք և անհոգութենով մեռ-
նինք։ Թո՛ղ քո շնորհդ զօրացնէ մեզ, որ էս
աշխարհքումս պարկեշտութենով՝ արդարութե-
նով և Աստուածպաշտութենով ապրինք. և վեր-
ջումն մեր գնալըն և վազելըն ուրախութենով
կատարենք։

Ամենակարող Աստուած, որ շնորհք տուիր
մեզ, որ էս ժամանակումս միաբանութենով
մեր աղաչանքներըն մատուցանենք քեզ. և խոս-
տացար որ երբ որ երկու կամ երեք հոգի քո
անունովն մին տեղ ժողովվին, դու նորանց
մէջն կըլինիս և նորանց խնդրվածքներըն կըկա-
տարես. հիմիկ էլ ո՛վ Տէր՝ քո ծառաների աղա-
չանքներըն և խնդրվածքներըն կատարի՛ր, ինչ-
պէս որ նորանց օգտակար կըլինի։ Տո՛ւր մեզ
էս աշխարհքումս քո ճշմարտութեան գիտու-
թիւնըն, և նոր գալու աշխարհքումն յաւիտե-
նական կեանքըն. ամէն։ Մե՛ր հայր որ։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄԻՆ ԷՍԷԿԱՆ ՀԱՄԱՐ։

Ո՛վ ամենակարող Աստուած, և ողորմած հայր, որ ամէն մարդկանց ողորմու�ես, և իսկի մին բան, որ արիր, չես անարդում. որ էլ մեղաւորի մահը չես կամենում, բայց աւելի որ նա իրան մեղքերից յետ դառնայ և քո ողորմութենով փրկվի։ Թող մեզ մեր մեղքերը. և ընդունիր և մխիթարիր մեզ. ինչու որ՝ մեր մեղքերի ծանր բեռնովն նեղացած և թուլացած ենք։ Քո յատուկ գործդ միշտ ողորմիլն է, քեզ մենակ է վայելում մեղաց թողութիւն տալ։ Սրա համար, խնայիր մեզ, բարի Տէր, խնայիր քո ժողովրդին, որ քո որդոյ պատուական արիւնովն փրկեցիր. դատաստանի մէջ մի մտներ քո ծառաների հետ, որ անպիտան հողեւ ողորմելի մեղաւորներ ենք. բայց քո բարկութիւնը վէր առ մեզանից, որ խոնարհութենով մեր անարժանութիւնը խոստովանումենք, և ճշմարտութենով ապաշխարումենք մեր մեղքերից. և էսպէս շուտ արա օգնիր մեզ էս աշխարհքումս, որ էն նոր գալու աշխարհքումս յաւիտեան քեզ հետ ապրինք, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

Ա՛յ դեռ քանի որ էսպէս մեր անարժանութիւնը խոստովանումենք, և ողորմութիւն ենք

խնդրում. էլ աղաչումենք քեզ որ մեզանում սուրբ սիրտ էլ ստեղծես, և ուղիղ հոգի նորոգես մեր ներսումս։ Յե՛տ դարձրու մեզ, ով բարի Տէր, և ապա յետ կդառնանք։ Օ՜օրաց՝րու մեզ, որ մեր օրհնըված փրկչի օրինակի ետևէն գանք։ Նորա նման հեզ և սրտով խոնարհ լինինք։

Օ՜հ երանի՜ թէ իսկի մին ժամանակ բարկութիւն, սրտմտութիւն, կամ չար միտք չըվերկենայ մեր սըրտերումս։

Տէր՝ մեր սրտի էս ամէն չար մտածմունքներըս և փտիկներըս ջընջի՛ր և վէր տա։ Թո՛ղ իսկի դառն խօսքեր դուրս չըգան մեր բերանից։ Ա՛եր ջանքս ամէն բաների մէջ միշտ և հաստատ էն լինի, որ քեզ հաճոյ լինինք։

Ո՛վ Տէր՝ թո՛ղ ամէն օր մեր վախճանելոյ համար մտածենք. և մեր գլխաւոր գործն էն լինի, որ մեր անձներըս պատրաստենք քո առաջդ գալոյ համար, ով մեր աստուած, երբ որ դու կըգաս դատաստան անելոյ։ Ա՛անաւանդ երբ որ մեր անձներըս գիշերի հանգըստին յանձնումենք՝ թո՛ղ յիշենք, թէ պէտք է մեզ շուտով վէր ընկած լինիլ դերեզմանի մէջ։ Ցանկանումենք ով սիրտ քննող Ա՛ստուած, որ քո

ահաւոր երեսիդ առաջին էս դիշերումս մեր անձնեերըս քննենք և հարցնենք. եթէ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն խաղաղութիւն ունենանք քեզ հետ. և եթէ ընդունելի լինինք քո տիւանի առաջին. թէ որ հենց հիմիկ մեր հոգիներս էստեղից կանչվին քեզ մօտ։ Դու ինքդ պատուիրեցիր մեզ, որ մեր անձնեերըս քննենք եթէ հաւատքի մէջ լինինք, և եթէ Յիսուս Քրիստոս մեզանում լինի կամ թէ ոչ։ Օհ երանի թէ մեր խղճմտանքն քո հոգոյ առաջնորդութենովն ճշմարիտ և ուղիղ պատասխան տայ էս հարցմունքներիս համար։ Այ թէ որ մեր հոգոյ յաւիտենական երանութեան համար դեռ մին տարակուսանք կայ. թող հանգիստ չառնենք մինչև որ էն հեռացած լինի։ Օրհնումենք քեզ և քո սուրբ անունիցն գոհանումենք էս օրիս ամէն ողորմութիւններին համար. քո բարի և քաղցր նախախնամութեանովդ շատ վտանգներից պրծանք, որ նորանց մենք էլինք իմանում, որ էլ մեր ամէն հոգս անելն կարող չէր մեզ փրկել նորանցից. ապա թող մեր սրտերս գոհութենով լցվին դեռ քանի որ մեր պռօշներն խօսքով դուրս են բերում նորան։ Դու ես, որ միշտ պահպանումես մեզ առողջութեան և զօրութեան մէջ. ապա զօրացրու մեզ որ պարկեշտութենով՝ արդարութենով՝ և Աստուածպաշտութենով ապրինք էս

ջար աշխարհքումն։ Դու կերակուր և շոր ես տալիս մեզ։ Սրա համար ով Տէր՝ երկրպագութիւն ենք տալիս քո մարդասիրութեանդ, որ արժանի չենք նորան. և աղաչումենք քեզ, որ էս ժամանակաւոր բարիքներիս հետ քո շնորհքի շատ բարձր բարիքներըն էլ մեզ վերայ աւելացնես Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ Կերակրիր մեր հոգիներիս կենաց հացովն. հագցրու նորանց փրկութեան շորերովն. տուր մեզ հոգևոր առողջութիւն և զօրութիւն՝ որ քո ամէն պատուիրանքներումն և օրէնքումն անարատ գնանք և վարվինք։ Ով Տէր ընդունիր մեր աղօթքներըս՝ մեր գոհութիւնները. և մահուան ժամումն՝ ով երկնաւոր հայր ընդունիր մեր հոգիներըս Յիսուսի Քրիստոսի համար. ամէն. Ա՛ե՛ր հայր որ։

Ուրբաթ պատարագի համար։

Ով շատ մարդասէր հայր, տեղու բարձի մէջ վէր ընկած ննջեցինք և մին էլ վէր կացանք որ խոստովանենք, թէ մէնակ դու ես տալիս մեզ հանգստութենով բնակվիլ։ Ով Տէր՝ սէրն և շնորհակալութիւնն ամէն կողմանէ շարժու-

մէ մեզ, որ սոնչն օր մեր մեղաւոր մարմիններ-
ըս և հոգիներըս քո աստուածային փառաւո-
րութեան առաջին խոնարհացնենք։ Վայ մեզ,
որքան պատժապարտ կըլլինչիք, թէ որ քեզ
երկրպագութիւն անելուցն անհոդ լինինք։

Ապա սատանային, էն ամբարտաւան հոգոյն
նման կըլլինինք՝ որ քեզ և մեզ թշնամի է։
Բայց թէ և քո ողորմութիւնդ սովորցրուց մեզ
մեր ծընկներըս չոքացնել քո առաջիդ, բայց
ով Տէր, որքան ցած և անարժան է մեր երկր-
պագութիւնն, որ քո սուրբ անուանիդ ենք անում։
Քանի քիչ է շնորհակալութիւնն, որ ունինք
մեր սրտերումն էն ստացած ողորմութիւններին
համար։ Քանի քիչ է մեր անձնելի խոնարհու-
թիւնն, թէ և մեղաւոր բնութենով և մեղաց
անթիւ գործքերով պատած և պղծված ենք, որ
նորանցով քեզ բարկացրինք։ Քանի տկար է
մեր սրտի փակին, որ էսօր քեզ փառաւորենք։
Օ՜հ քո անուան սէրըն աւելացրու և նոր վա-
ռիր մեր սրտերումն, և օգնիր մեզ, որ էս նոր
օրումն նոր կեանք սկսենք։ Կարելի էր որ դժուա-
քի մէջ զարթնանանք, բայց դու պահպանեցիր
մեզ որ ուրիշ օր տեսնենք։ Օ՜հ երանի թէ
քո հաւատքովն և սիրովն նորան սկսենք և անց-
կացնենք, ով մեր Աստուած։

Մինչև հիմիկ աշխարհքի մէջ ապրեցանք և քիչ օգուտ և պտուղ բերինք։ Ստեղծվեցանք և աշխարհքի մէջ ուղարկվեցանք քեզ սիրելոյ և ծառայելոյ համար։ Բայց վայ մեզ. ինչու որ. ուրիշ բաներըն աւելի սիրեցինք քան թէ քեզ՝ և քեզ ծառայելոյ տեղակ մարմնոյ կերպ կերպ ցանկութիւններին և հեշտութիւններին ծառայեցինք։ Մեր անձներիս համար աւելի կենդանի էլանք քան թէ քեզ համար և մեր երանութիւնըն աշխարհքի մէջ խնդրեցինք և ոչ թէ քեզանում։ Սորանում և էլ հազարաւոր բաների մէջ, իրաւի մեղաւոր ենք քո առաջիդ։ Բայց յոյս ունինք որ դու մեր յիմարութիւնըն ճանաչացրիր մեզ և նորա համար ամօթ արիր մեզ։ Սրա համար, ով Տէր, էս տեղ, մեր անձներըս, մեր հոգիներըս և մարմիններըս քո առաջիդ ենք դընում և քեզ ենք յանձնում, որ քեզ բանական, սուրբ և կենդանի պատարագ լինի. և խոնարհութենով աղաչումենք քեզ, որ քո շնորհքովն և երկնաւոր օրհնութենովն լցվինք։ Եւ թէ և մեր շատ կերպ մեղքերին համար արժանի չենք, որ քեզ մին ընդունելի պատարագ մատուցանենք, բայց աղաչումենք քեզ որ էս մեր պաշտօնըս և ծառայութիւնըս ընդունես, էջ թէ մեր արժանաւորութեան վերայ նայելով, բայց մեր մեղքերըն Յիսուսի Քրիստոսի ձեռովն

մեզ բաշխելով։ Եթէ ուտենք կամ խմենք, եթէ աշխատենք կամ մեր աշխատանքներիցն հանգիստ առնենք. եթէ ճանապարհ գնանք, կամ տան մէջ նստենք. թող ամէնքն էսօր քո անունին փառք և պատիւ տալոյ համար անենք։ Եւ ինչ գործի մէջ որ մտնենք թող մեր մարդասէր փրկչէն սէրն և քաղցրութիւնն զօրաւոր լինի մեր մտքներումն։ Օ՜հ թող էլ տաս որ անշորհակալութենով նորա բարութիւնը, որ մեզ վերայ է մոռանանք։ Բայց դեռ քանի որ մեր ձեռներն մեր աշխարհական գործքերումն պարապվումեն՝ թող մեր սրտերն սուգ անեն մեր մեղքերին համար, և մտածեն էն պատարագին վերայ, որ մեզ համար տրվվա. և էն Յիսուսի սիրովն հալվին, որ մեզ համար մեռաւ և մին էլ յարութիւն առաւ։ Վայ մեզ. ո՞ր տեղ կըլինեինք էս ժամանակս, թէ որ Աստուծոյ որդին Քրիստոսն մեզ ողորմութիւն չանէր մեր ցած և անարդ վիճակիս մէջն։ Փառք լինի նորա սուրբ անունին յաւիտեանս յաւիտենից։

Ո՛վ ամենակարող և յաւիտենական Աստուած, աղաչումենք քեզ. առաջնորդիր՝ սրբիր՝ և կառավարիր մեր սրտերըս և մարմիններըս, շինական արա քո պատուիրանքների ճանապարհ-

ներումն, որ քո ամենակարող պահպանութեանովդ էստեղ և յաւիտեան պահպանվինք մարմնոյ կողմանէ և հոգոյ կողմանէ, մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի ձեռովն. ամէն։ Մե՛ր հայր որ։

Ուրբաթ երեկոյան համար։

Ամենակարող և յաւիտենական Աստուած, որ միշտ աւելի յօժար ես լսելոյ քան թէ մենք աղօթք անելոյ. և որ էլ կարող ես աւելի տալ, քան թէ մենք կարենանք խնդրել կամ մտածել. թափիր մեզ վերայ քո ողորմութեան հարբստութիւնքն. թողութիւն շնորհիր մեզ էն չար բաներին համար, որ նորանցից մեր խղճմտանքն վախումէ. և տուր մեզ էն բարի բաներըն, որ մենք արժանի չենք նորանց խընդրելոյ, եթէ ոչ Յիսուսի Քրիստոսի անունովն։

Ո՛վ Տէր՝ մին էլ շնորհք տրվաւ մեզ որ մեր անձներըս քո առաջիդ երևացնենք։ Քո ողորմութեան ականջն թող բաց լինի մեր աղօթքներին համար. և որ էլ մեր խընդրվածքներըն ստանանք, տուր մեզ էն խնդրել, որ հա-

ծոյ է քեզ։ Գիտումենք որ կարող չենք աղօթք անել, ինչպէս որ արժանէ, եթէ ոչ քո շնորհքդ մեր սրտերըս և պռօշներըս կառավարէ։ Ո՛վ տուր մեզ աղօթք անելոյ ջերմեռանդ ցանկութիւնը։ Թոյլ հիմիկ քո շնորհքդ էնպէս խնդրենք, ինչպէս դատապարտված չարագործ ողորմութիւն է խնդրում իրան դատաւորիցն։ Եւ դու ցոյց տուր էն ողորմութիւնը մեր մեղաւոր հոգիներիս քո անուանիդ համար։ Ո՛վ Տէր՝ մեր օրերն և տարիներն անասելի շուտագնացութեանով անց են կենում, և նորանցից ամէն մէկն մեզ մահին և յաւիտենական աշխարհքին աւելի մօտեցնում։ Օ՜հ տուր մեզ, որ միշտ ամէն աշխարհական ջանքերի և աշխատանքների ունայնութիւնը իմանանք, և մեր միտքս առնենք թէ քանի հարկաւոր և օգտակար է, որ աստուծոյ որդոյ հաւատքովն ապրինք. որ էլ երբ որ մահն բռնէ մեզ՝ մեր անձներս պատրաստված լինին աշխարհքը թողելոյ և քեզ մօտ գալոյ համար։ Ո՛վ Աստուած՝ դու որ նորանց համար՝ որ քեզ սիրումեն էնպէսի բարիքնիրը պատրաստեցիր, որ ամէն մարդոյ մտքիցն վերև են. էնպէսի սէր թափիր մեր սրտերի մէջ, որ մենք ամէն բաներից աւելի քեզ սիրենք և էն քո աւետիքներըն ստանանք ժառանգենք, որ էն ամէն բանիցն գերազանց են, որ մենք կարողանանք ցանկանալ։ Օ՜հ

տուր մեզ, որ էս գիշերս որ ննջենք, մեր սրտի ցանկութիւնն էն վերևի բաներին վերայ հաստատված լինի, էն տեղն որ Քրիստոսն նստումէ հօր աջկողմումն. և երբ որ մեռնինք, հենց սրտի էն խաղաղութեանովն մահի ձեռին տակն խոնարհվինք, որ նորանով հիմիկ մեր մարմիններըս մերկացնումենք մեր տեղուբարձների մէջ քուն լինելոյ համար։

Ո՛վ Աստուած, որ դու մէնակ կարող ես մեղաւոր մարդկանց անկարգ կամքըն և ցանկութիւններըն կառավարել և կարգով հաստատել, շնորհիր մեզ, որ սիրենք էն, որ դու պատուիրեցիր մեզ, և ցանկանանք էն բաներին, որ դու խոստացար, որ էնպէս մեր սրտերս էս աշխարհքիս կերպ կերպ փոփոխմունքներին մէջ պինդ և անդողդող հաստատվին էն երկնաւոր բաներին վերայ, որ մէնակ նորանցում ճշմարիտ ուրախութիւնն է գտնվում։ Օհ թող չըտաս մեզ, որ սուտ ունայնութիւններից խաբվինք։ Թող չըտաս մեզ, որ մեր անձներըս բարեպաշտութեան դրսի կերպարանքով խաբենք առանց նորա զօրութիւնըն ունենալոյ մեր սրտումս։ Բայց շնորհիր մեզ քո հոգին՝ միշտ էն մտածել և անել, որ շիտակ և ուղիղ է՝ որ մենք առանց քեզ կարող չենք մին բարի բան անել։ Թող քեզանով զօրանանք և քո կամաց պէս ապրենք

ոչ թէ էն բանին վերայ յոյս դնելով, որ մենք ենք անում. ինչու որ՝ մեր ամէն գործքերն իսկի ոչինչ արժանի չեն. բայց էն Յիսուսի վերայ մեր յոյսըն հաստատելով, որ մեր մեղքերըն վէր առաւ և մեր ցաւերըն վերացրուց։ Ո՛վ Տէր, թող նորա օրհնված անունն ամէն օր աւելի պատուական և քաղցր լինի մեզ։ Թող շնորհակալութենով քո անգին բարութիւնըն և շնորհքըն ընդունենք, և էլ ամէն օր ջանք անենք որ նորա ամենասուրբ կեանքի օրհնված օրինակի ետևէն գանք։ Ո՛վ ամենակարող Աստուած, որ խոստացար նորանց խընդրուածքներըն լսել, որ քո որդոյ անունովն քեզ խնդրումեն. աղաչումենք քեզ, որ քո մարդասիրութենովդ քո ականջներըդ խոնարհացնես մեզ մօտ, որ հիմիկ էս աղօթքներըս և աղաչանքներըս քո առաջիդ բերինք. և շնորհիր որ էն որ հաւատքով քո կամքիդ պէս խնդրեցինք, քեզանից ստանանք. որ մեր հոգիս մխիթարվի և քո անունդ փառաւորվի, մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն. ամէն. Ա՛ր հայր որ։

Շաբաթ պատարագի կոչումը։

Ո՛վ ողորմած և մարդասէր հայր՝ դու էն ամէնին որ քո շնորհքի կարօտ են և էն իրանց կարօտութիւնը իմանումեն, կանչեցիր և հրամայեցիր որ քեզ մօտ գան. և էլ խոստացար, թէ դու նորանց, որ քեզ մօտ են գալիս իսկի մին ժամանակ դուրս չես հանիլ։ Դու բարութեանով լցնումես սովածները. դեռքանի որ հարուստներն հեռու են քցվում։ Օ՜հ երանի թէ էդպէս սոված և ծարաւ լինինք քո քաւոր և սրբոր շնորհաց համար, որ էս ժամանակումն նորան ստանանք և վայելենք։ Թող քեզ աւելի փափակինք քան թէ մեր ամէն օրվան կերակուրին. և իսկի մին բան էնքան չբխնդրենք, որքան քո խաղաղութեան՝ քո շնորհաց՝ և քո սիրոյ փորձառութիւնը։

Մենք էս օրիս սկիզբն հասինք, որ քո գի տութեանով մեծանանք, և քեզ փառք տանք։ Օ՜հ շնորհիր, որ էս մեծ բանս մեր կեանքումն կատարելապէս կատարվի։ Դու ով Աստուած՝ սուրբ Աստուած ես. Քրիստոս մեր փրկիչն՝ սուրբ փրկիչ է. քո հոգին՝ սուրբ հոգի է. քո արքայութիւնդ սուրբ տեղ է. քո հրեշտակներն սուրբ հրեշտակներ են. և քո փրկված ժողովուրդն սուրբ ժողովուրդ է։ Ո՛վ Տէր, մեզ

էլ սուրբ արա, ինչու որ՝ առանց սրբութեան կարող չենք քեզ տեսնել։ Թող մեր սրտերս մեղքիցն ջոկվին և դառնան քեզ մօտ։ Տուր որ ոչ թէ միայնակ մեղքիցն հրաժարվինք, բայց էլ բոլոր սրտով ատենք նորան. պատճառն որ՝ դու հենց էն ես ատում։ Թող ամէն մեղքըն ատենք, և էն ամէնիցն յետ քաշվինք, ինչ որ քո կամքիդ հաճոյ չէ. Թող մեր անձնեերըս ատենք. ինչու որ՝ մեղաւոր և քեզ աննման ենք։ Թող մեր խօսքերին և մտածմունքներին համար էնքան արթուն լինինք, որքան որ մեր գործքերին համար։ Թող էնքան չբցանկանանք մեր ընկերների առաջին բարի երևիլ, որքան պիտի ցանկանանք քո երեսի առաջին ճշմարտապէս բարի լինիլ։ Թող ջանք անենք, որ մեր անձնեերըս քեզ հաճոյ ընծայենք։ Ով Աստուած որ սրտերըն քննումես. թող քո սուրբ խօսքդ մեր բոլոր կենցաղավարութեան կանոն լինի. և մեր բոլոր կամքն էնպէս կառավարվի, որ ամէն բանի մէջ քո փառքին մտիկ տայ։ Պատճառն որ՝ կարող չենք արքայութիւնն մտնել, մինչև որ էսպէս սուրբ լինինք։ Ով Տէր աղաչումենք քեզ պահպանիր էսօր մեր հոգիներըս և մարմիններըս քո յաւիտենական ողորմութենով. և որովհետև մեր տկարութիւնն առանց քեզ իսկի ոչինչ կարող չէ անել, բայց միայնակ սխալիլ և մեղանչիլ, ապա դու պահպանիր մեզ քո օգնա-

կանութենովդ ամէն ժամանակ էն ամէն բանե-
րիցն, որ վնաս են տալիս մեզ. և առաջնորդիր
մեզ էն ամէն բանի մէջ, որ մեր փրկութեան
համար օգտակար է: Թող քո շնորհդ ամէն
ժամանակ մեր առաջին և մեր եռևէն գնայ, և
տուր մեզ, որ միշտ ամէն բարի գործքերին հա-
մար պատրաստ լինինք: Քո ողորմութիւնդ
մեծացրու և շատացրու մեզ վերայ, որ քո կա-
ռավարութենովն և առաջնորդութենովն էս ժա-
մանակաւոր բաներիս միջովն անց կենանք, էն-
պէս որ վերջն չըզրկվինք էն բարիքներիցն, որ
յաւիտենական են: Խոստովանուումենք թէ մենք
առանց քեզ կարող չենք մին բարի բան անել:
Օ՛հ սրա համար տուր մեզ քո շնորհքի օգնու-
թիւնը, որ քո պատուիրանքներդ պահենք և
կամքով և գործքով հաճոյ լինինք քեզ:

Ո՛վ Տէր, որովհետև մահապարտ մեղաւոր-
ներ ենք, աղաչումենք քեզ, քո սիրելի որդոյ
համար, որ քո մարդասիրութեան պէս մեր
աղօթքներին լսես, և խնայես մեզ որ հիմիկ
մեր մեղքերը խոստովանումենք քո առաջիդ.
որ մենք, որ խղճմտանքներումս մեղքով տրտմած
և դատապարտված ենք, քո ողորմած ներողու-
թենովդ և թողութենովդ էն մեղքերիցն արձակ-
վինք: Ո՛վ Տէր, հազարաւոր աղքատ մեղաւոր-
ներ, որ մեզ նման պատժապարտ սիրդ և ան-

պիտան էին. քո առաջիդ ողորմութիւն են գտել։ Եւ հիմիկ քո ականջդ ծանր չէլաւ որ չըկարենայ լսել. և քո ձեռնդ չըխափանվեցաւ որ չըկարենայ փրկել։ Օ՜հ սրա համար թո՛ղ մենք էլ դասվինք և համարվինք նորանց հետ, որ քո շնորքովն փրկված և երանելի կլինին յաւիտեանս յաւիտենից։ Մենք մեր կողմանէ իսկի բան չունինք մեզ անմեղ անելոյ համար, բայց մէնակ էն՝ որ Քրիստոս մեռաւ մեղաւորներըն փրկելոյ համար։ Իսկաւ և ամէն կողմանէ միայն քո ողորմութեան վերայ ենք ընկնում. և իսկի մին յոյս չունինք, բայց մէնակ մեր մարդասէր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի անունովն, որ սովորցրուց մեզ ասել. Մեր հայր որ։

Հոգեոր երգեցողաց համար։

Ո՛վ Տէր մին էլ նոր օրի վերջումն, և նոր շաբաթի վախճանումն, մին տեղ ենք ժողովվում, շնորհակալ սրտով՝ որ էն քո բարութիւնըն խոստովանենք որ մեզ պահպանեց։ Ո՛վ Տէր, մեր միտքս բեր, որ օրերն և շաբաթներն, իրանց անց կենալովն մեզ էլ մահին և յաւիտենական աշխարհքին մօտեցնում։

Հիմիկ մին շաբաթով աւելի մօտիկ ենք մեր վախճանին և մահին, քան թէ էն անցկացած շաբաթի վերջումն էինք։

Օ՜հ երանի թէ ճշմարտութենով աւելի ջերմեռանդ, և մաքով աւելի զարթնացած և հենց նորանով աւելի յարմար և ընդունելի լինէինք սրբերի ժառանգութեան մէջ մտնելոյ, որ լուսոյ մէջն են։ Թող էս գիշերս սրտի մտօք միտք անենք. թէ մարդն որ կընկանից ծնված է, մէնակ կարճ ժամանակ ունի ապրելոյ համար, և խեղճութենով լցված է. որ նա դուրս է գալիս և ապա կտրվումէ ինչպէս ծաղիկ. պատճառն որ՝ անցէ կենում ինչպէս շուաք, որ իսկի մին ժամանակ հաստատ չի մնում։ Թող մեզանից ամէն մէկն յիշէ, որ հենց կեանքի միջումն մահի մէջ ենք։ Ապա ուրմից պիտի օգնութիւն խնդրենք, եթէ ոչ քեզանից, ով Տէր՝ որ մեր մեղքերին համար արդարութենով բարկացած ես։ Բայց էնպէս էլ ով ամենասուրբ Տէր Աստուած, ով ամենակարող Տէր՝ ով սուրբ և ամենողորմ փրկիչ, մի մատներ, մի քցեր մեզ յաւիտենական մահի դառն տանջաքներին մէջ։ Դու ով Տէր՝ մեր սրտի խորհուրդներըն գիտու�ս. քո ողորմութեան ականջներըն մի խիստ մեր աղօթքներիս համար. բայց ով ամենասուրբ Տէր՝ ողորմիր և խնայիր մեզ։ Ով ամենակա-

բոզ Աստուած, ով սուրբ և ամենողորմ փրկիչ, դու ամէն փառքի և պատուոյ արժանի յաւիտենական դատաւոր. Թող չբաս որ մենք մեր յետին ժամումն վէր ընկնինք քեզանից, թէ և մահի նեղութիւններն շատ և դառն լինին մեզ վերայ։ Ո՛վ Տէր՝ մին էլ յոյս ունինք որ նոր կիրակի օր տեսնենք։ Աթէ պահվինք որ տեսնենք նորան. օ՛հ երանի թէ հանգիստ առնելոյ օր լինի, որ ոչ թէ մէնակ մեր աշխարհական գործքերիցն, բայց էլ աշխարհական խորհուրդներիցն և երկրաւոր զբաղմունքներիցն հեռու լինինք։ Թող մեր միտքն քո շնորհաց հոգովն շարժվի և պատրաստվի, որ նորան քո փառքի համար և մեր անձների շահին և օգտին համար անցկացնենք և գործածենք։ Չը՛լինի որ նոր գալու առաւօտու պատուական ժամերըն անհոգութենով մեր տեղուբարձների մէջ մնխենք, բայց տուր մեզ որ շուտով վեր կենանք քո առաջիդ աղօթք անենք և քեզանից գոհանանք։ Թող քո մեծ բարութիւնըն մտածելով զարթնանք. և որովհետև մեր փրկիչն էլ էն օրումն յարութիւն առաւ մեռելների միջից, Թող սուրբ փափակներով նորա երկնաւոր բնակարանի տեղն վերանանք, և հոգով քո վերևի ծառաներին հետ ժողովվինք, և քո որդի Յիսուսի Քրիստոսի անունի փառքըն յայտնենք և գովենք։ Ո՛վ Տէր՝ Թող չբ՛աս որ էս կիրակիս, որ գալու է մնխվի

մեզանից ինչպէս որ անցկացած կիրակիներիցն շատերն մոխվեցան. բայց շնորհիր որ մեր հոգիներըն նորանով յաւիտենական շաբաթներին համար պատրաստվին, և որ մենք սկսենք նոր դալու աշխարհքի ուրախութիւններին և երանութիւններին հետ մասնակից լինել, դեռ քանի որ հենց էստեղ մնումենք:

Երկնաւոր հայր շիտակ արա մեր սրտերըս, որ քեզ օրհնութիւններ երգենք:

Ով Տէր օգնիր մեզ որ ուրախութենով քո սուրբ բանի քարոզութեան ականջ դնենք, և էն ամէն հոգևոր բաներին մտիկ տանք, որ տէրունական օրն տալիս է մեզ:

Թող յոյս ունենանք և սպասենք, որ քո շնորհքովդ աւելի օգուտ և ուրախութիւն ընդունենք նորանցից. քան թէ էն որ էս ունայն աշխարհքումս գտինք: Իրաւի որ մենք իսպառ անարժան ենք ուրիշ շաբաթ օրի լոյսըն տեսնելոյ և մին էլ քարոզութիւն լսելոյ, և մին էլ մեր մեռած փրկչի սիրոյն համար լսելոյ՝ որ նորանով սիրեց մեզ: Իրաւի որ իսպառ արժան չենք որ քո սուրբ սաձարն մտնենք, կամ քո ժողովրդին հետ գոհութիւնների և աղօթքների էն օրհնված պաշտօններըն մատուցանենք, որ նորանց համար էս աշխարհքս ուղարկվեցանք,

բայց ով Տէր քո ողորմութիւնդ մեծ է, և սրա համար սիրտ ենք առնում որ յուսանք թէ դու մեզ էս աշխարհքիցս չես վէր առնիլ, մինչև որ մեզ պատրաստած լինիս էն լաւ բարութեան աշխարհքն մտնելոյ համար։

Ամէն էլ մեր հոգիներըս քո մարդասէր ձեռքդ ենք յանձնում։ Ով Տէր, փրկիր նորանց, խաչի պատուական արիւնովն, լուացեր նորանց, սրբիր նորանց քո սուրբ հոգոյ շնորհքովն, և վերջն ընդունիր նորանց քո յաւիտենական արքայութեան մէջ, Յիսուսի Քրիստոսի համար. ամէն։ Ամէ՛ր հայր որ։

Spec 104